ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2020
02.2020
03.2020
04.2020
Ապրիլ
05.2020
06.2020
07.2020
08.2020
09.2020
10.2020
11.2020
12.2020

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 27-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2020

Ապրիլ

թիվ 4 (260)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին

5 «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին

7 «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

8 «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

9 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին

10 «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

11 «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

12 «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

13 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին

14 «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

15 «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

17 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՍԱՐԳԻՍ և ՆԱՆՆԱ» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին

17 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ «Շիրակ Ինվեստ» մասնաճյուղը, «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ Սպիտակի և Դիլիջանի ներկայացուցչությունները գրանցելու վերաբերյալ

17 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ «Մալաթիա», «ՋԻ ԸՆԴ ԷՅ» ՈՒՎԿ ՍՊԸ «Տաշիր» մասնաճյուղերը գրանցումից հանելու վերաբերյալ

17 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ «ԿԱՊԱՆ» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

17 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 1 փոխանակման կետի, 2 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

17 ՀՀ ԿԲ թիվ 56Լ որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 48-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2020 թվականի առաջին եռամսյակ)»

19 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 49-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 55-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

47 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «կամ այլ կապի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերով.

2) 1-ին մասի երկրորդ պարբերության վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված:»:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը «կամ կապի այլ» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
1 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-165-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 31-ին (ՀՀՊՏ N 50 (1605), 13.05.20):

*«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 13-րդ կետից հանել «լիցենզավորած արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձինք (արժութային դիլերներ-բրոքերներ),» բառերը:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքները, այդ թվում՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններով գործարքները, իրականացվում են մասնագիտացված անձանց միջոցով, բացառությամբ ներդրումային ընկերությունների, որոնք կարող են իրականացնել արտարժույթի առք ու վաճառք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և (կամ) դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով: Մասնագիտացված անձանց կողմից իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի գործարքների փոխարժեքը և ծավալները սահմանում են մասնագիտացված անձինք:»:

Հոդված 3. Օրենքի 7.1-ին հոդվածում՝

1) վերնագրից հանել «դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող (արժութային դիլեր-բրոքեր), արտարժույթի» բառերը.

2) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 4-րդ մասից հանել «դիլերային-բրոքերային առուվաճառք, արտարժույթի առուվաճառք, արտարժույթի» բառերը.

4) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության կամ դրա լիցենզիա ստանալու համար դիմած կազմակերպությունների 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցները չպետք է ունենան դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ, իսկ արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության կամ դրա լիցենզիա ստանալու համար դիմած կազմակերպության ղեկավարները չպետք է ունենան դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ: Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն մասով նախատեսված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 40 (1595), 14.04.20):

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասից հանել «դիլերային առուվաճառք իրականացնող անձանց (արժութային դիլերների), արտարժույթի» բառերը.

2) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձի (փոխանակման կետի), արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպող անձի գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում (լիցենզիայի պայմանները կամ արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելու համար) անձը (այդ թվում՝ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պահին տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում 50 և ավելի տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցը) իրավունք չունի գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու պահից, լիցենզավորված անձի ղեկավարի կամ լիցենզավորված անձի աշխատակցի՝ Կենտրոնական բանկի տված որակավորման վկայականից զրկելու պահից երեք տարի ժամկետով որևէ կերպ (ուղղակիորեն կամ իրավաբանական անձ հիմնադրելով կամ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում որևէ մասնակցություն ունենալով կամ առանց մասնակցության իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունենալով կամ արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների գործունեություն իրականացնող անձանց կողմից որպես աշխատակից ներգրավվելով) իրականացնելու արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների գործունեություն:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

8 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-182-Ն

«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) իր կամ հաճախորդի հաշվին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացումը.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
8 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-183-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 40 (1595), 14.04.20):

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-150-Ն օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված վճարահաշվարկային կազմակերպությունները կարող են իրականացնել վճարահաշվարկային փաստաթղթերի և վճարային գործիքների պրոցեսինգ և քլիրինգ, փոստային կապի ծառայությունների մատուցում՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում, ինչպես նաև բացառապես դրամական (փողային) փոխանցումների իրականացման հետ կապված արտարժույթի փոխարկում՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով:

Սույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետով սահմանված վճարահաշվարկային կազմակերպությունները կարող են իրականացնել պրոցեսինգի, քլիրինգի հետ կապված ապարատային, ծրագրային համակարգերի, սարքերի, ծրագրերի ստեղծման, շահագործման, սպասարկման հետ կապված գործունեություն, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումներ՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

8 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-184-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 40 (1595), 14.04.20):

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին[*]

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «բ» կետի «դիլերների-բրոքերների, ներառյալ բանկերի,» բառերը փոխարինել «բանկերի» բառով.

2) «գ» կետից հանել «դիլերների-բրոքերների, ներառյալ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
8 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-186-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 40 (1595), 14.04.20):

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «գ» ենթակետից հանել «արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, » բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
8 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-187-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 40 (1595), 14.04.20):

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-123-Ն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
8 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-188-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 40 (1595), 14.04.20):

«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 13.4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«**Հոդված 13.4.** Բանկային գաղտնիքի տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին*

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում վարկային տեղեկատվության կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
19 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-202-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 43 (1598), 22.04.20):

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 115.1-ին հոդվածով.

«***Հոդված 115.1.*** Ապահովագրական գաղտնիքի տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ապահովագրական գաղտնիքի հրապարակում չի համարվում:»:

Հոդված 2. Օրենքի 118-րդ հոդվածի 1-ին մասում «115» թիվը փոխարինել «115.1» թվով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
19 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-203-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 43 (1598), 22.04.20):

«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տեղեկությունների տրամադրումը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
19 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-204-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի մարտի 25-ին (ՀՀՊՏ N 43 (1598), 22.04.20):

«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում «0.075» թիվը փոխարինել «0.04» թվով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2020 թվականի ապրիլի 21-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2020 թվականի ապրիլի 21-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար Օրենքի 71-րդ հոդվածով սահմանված տույժը գործատուն (հարկային գործակալը) վճարում է 0.04 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ տույժերի հաշվարկն սկսվել է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
27 ապրիլի 2020 թ., Երևան, ՀՕ-221-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի ապրիլի 22-ին (ՀՀՊՏ N 46 (1601), 04.05.20):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՆԱՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 51Ա):
- ***Գրանցվել են*** «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Շիրակ Ինվեստ» մասնաճյուղը, «ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության Սպիտակի և Դիլիջանի ներկայացուցչությունները (որոշումներ թիվ 1/220Ա, 1/228Ա):
- ***Գրանցումից հանվել են*** «ՄՈԳՈ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Մալաթիա», ««ՋԻ ԸՆԴ ԷՅ» ՈՒՎԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Տաշիր» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/224Ա, 1/225Ա):
- ***Թույլատրվել է*** «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «ԿԱՊԱՆ» մասնաճյուղի գործունեության դադարեցումը, որը համարվել է գրանցված (որոշում թիվ 1/232Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 30.000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/210), 1 փոխանակման կետի, 2 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/202Ա, 1/204Ա, 1/214Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2020 թ. ապրիլի 28-ի թիվ 56Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 6.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 3.5%:***

*Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2020 թվականի առաջին եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան
13 ապրիլի 2020 թ., Ն 48-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. ապրիլի 10-ին (ՀՀԳՏ Ն13(681), 15.04.2020):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով խթանել երկարաժամկետ միջոցների ներգրավումը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «դ» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Կանոնակարգի Հավելված 11-ի 2-րդ և 3-րդ կետերում «ներգրավված միջոցները,» բառերից հետո լրացնել «ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա և (կամ) կառավարության երաշխիքով պետական հատուկ ծրագրերի ֆինանսավորման նպատակով ներգրավված միջոցները, որոնց համար առկա է պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված դրույքաչափով ընդգրկման վերաբերյալ Կենտրոնական բանկի համաձայնությունը,» բառերը:
2) Կանոնակարգի Հավելված 11-ի 2-րդ և 3-րդ կետերում «ներգրավված միջոցները,» բառերից հետո հանել չակերտ (») կետադրական նշանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան
14 ապրիլի 2020 թ., Ն 49-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. ապրիլի 10-ին (ՀՀԳՏ N15(683), 04.05. 2020):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարելավել բանկային համակարգի իրացվելիության կառավարումը և բանկային համակարգի կարգավորումը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ժթ» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» և «դ» պարբերություններով.

«գ. բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև սահմանային հարաբերակցությունը (իրացվելիության ծածկույթի նորմատիվ),

դ. բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև սահմանային հարաբերակցությունը (զուտ կայուն ֆինանսավորման նորմատիվ):»:

2) Կանոնակարգը 19.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.3-րդ և 19.4-րդ կետերով.

«19.3. Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է.

1) Բոլոր արժույթներով՝ 100% ($Ն2^3$ նորմատիվ):

2) Յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով՝ 60%՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը, 80%՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, 100%՝ 2022 թվականի հունվարի 1-ից ($Ն2^3$ (FX) նորմատիվ, որտեղ FX-ը տվյալ արժույթի ISO (ԻՍՕ) 4217 կոդն է):

Ընդ որում, առաջին խմբում ներառված նշանակալի արժույթները խմբավորվում են:

19.4. Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է.

1) Բոլոր արժույթներով՝ 100% ($Ն2^4$ նորմատիվ),

2) Յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով՝ 60%՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը, 80%՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. ապրիլի 17-ին (ՀՀԳՏ N15(683), 04.05. 2020):

2021 թվականի դեկտեմբերի 31-ը, 100%՝ 2022 թվականի հունվարի 1-ից ($Ն2^4$(FX) նորմատիվ, որտեղ FX-ը տվյալ արժույթի ISO (ԻՍՕ) 4217 կոդն է):

Ընդ որում, առաջին խմբում ներառված նշանակալի արժույթները խմբավորվում են:»:

3) Կանոնակարգի 25-րդ կետը.

ա. «$Ն2^{22}$,» բառից հետո լրացնել «$Ն2^4$, $Ն2^4$(FX),» բառերով,

բ. «հաշվարկվում են ամսական,» բառերից հետո լրացնել «$Ն2^3$ և $Ն2^3$(FX) հիմնական տնտեսական նորմատիվները հաշվարկվում են շաբաթական և ամսական,» բառերով»:

4) Կանոնակարգը 36-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 36.1-րդ, 36.2-րդ, 36.3-րդ, 36.4-րդ և 36.5-րդ կետերով.

«36.1. Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը ($Ն2^3$ նորմատիվ) հաշվարկվում է՝

$Ն2^3$= ԲԻԱ/ԶԴԱ բանաձևով, *որտեղ*՝

ԲԻԱ- բանկի բարձր իրացվելի ակտիվներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 12-ի,

ԶԴԱ - բանկի զուտ դրամական արտահոսքն է՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 12-ի:

36.2. Յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը ($Ն2^3$(FX) նորմատիվ) հաշվարկվում է՝

$Ն2^3$(FX)= ԲԻԱ(FX)/ԶԴԱ(FX) բանաձևով, *որտեղ*՝

ԲԻԱ (FX) - տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկի բարձր իրացվելի ակտիվներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 12-ի,

ԶԴԱ (FX) – տվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկի զուտ դրամական արտահոսքն է՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 12-ի:

36.3. Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Ն2^4$ նորմատիվ) հաշվարկվում է՝

$Ն2^4$= ՀԿՄ/ԱԿՄ բանաձևով, *որտեղ*՝

ՀԿՄ – բանկին հասանելի կայուն միջոցներն է, որը որոշվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

$ՀԿՄ = ՀԿՄ_1 * ՀԿԿ_1 + ՀԿՄ_2 * ՀԿԿ_2 + ... + ՀԿՄ_n * ՀԿԿ_n$, *որտեղ*՝

$ՀԿՄ_1$, $ՀԿՄ_2$, $ՀԿՄ_n$- բանկին հասանելի կայուն միջոցների տարատեսակներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ի,

$ՀԿԿ_1$, $ՀԿԿ_2$, $ՀԿԿ_n$ – բանկին հասանելի կայուն միջոցների կշիռներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ի,

ԱԿՄ – բանկին անհրաժեշտ կայուն միջոցներն է, որը որոշվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

$ԱԿՄ = ԱԿՄ_1 * ԱԿԿ_1 + ԱԿՄ_2 * ԱԿԿ_2 + ... + ԱԿՄ_n * ԱԿԿ_n$, *որտեղ*՝

$ԱԿՄ_1$, $ԱԿՄ_2$, $ԱԿՄ_n$- բանկին անհրաժեշտ կայուն միջոցների տարատեսակներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ի,

$ԱԿԿ_1$, $ԱԿԿ_2$, $ԱԿԿ_n$, - բանկին անհրաժեշտ կայուն միջոցների կշիռներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ի:

36.4. Յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Ն2^4$(FX) նորմատիվ) հաշվարկվում է՝

$Ն2^4(FX)= ՀԿՄ(FX)/ԱԿՄ(FX)$ բանաձևով, *որտեղ՝*

ՀԿՄ (FX)– փվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին հասանելի կայուն միջոցներն է, որը որոշվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

$ՀԿՄ(FX) =ՀԿՄ_1(FX)*ՀԿԿ(FX)_1 + ՀԿՄ_2(FX)*ՀԿԿ_2(FX) +…+ ՀԿՄ_n(FX)*ՀԿԿ_n(FX)$, *որտեղ՝*

$ՀԿՄ_1(FX)$, $ՀԿՄ_2(FX)$, $ՀԿՄ_n(FX)$- փվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին հասանելի կայուն միջոցների տարատեսակներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ի,

$ՀԿԿ_1(FX)$, $ՀԿԿ_2(FX)$, $ՀԿԿ(FX)_n$ – փվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին հասանելի կայուն միջոցների կշիռներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ի,

ԱԿՄ(FX) – փվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին անհրաժեշտ կայուն միջոցներն է, որը որոշվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

$ԱԿՄ(FX) =ԱԿՄ_1(FX)*ԱԿԿ_1(FX) + ԱԿՄ_2(FX)*ԱԿԿ_2(FX) +…+ ԱԿՄ_n(FX)*ԱԿԿ_n(FX)$, *որտեղ՝*

$ԱԿՄ(FX)_1$,$ԱԿՄ_2(FX)$, $ԱԿՄ_n(FX)$- փվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին անհրաժեշտ կայուն միջոցների տարատեսակներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ի,

$ԱԿԿ_1(FX)$, $ԱԿԿ_2(FX)$, $ԱԿԿ_n(FX)$ - փվյալ նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) բանկին անհրաժեշտ կայուն միջոցների կշիռներն են՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ի:

36.5. $Ն2^3(FX)$ և $Ն2^4(FX)$ նորմատիվների հաշվարկման ժամանակ նշանակալի են համարվում այն արժույթները, որոնցով արտահայտված պարտավորությունները գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5%-ը՝ հավելված 12-ով սահմանված հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվա դրությամբ:»:

5) Կանոնակարգը 61.3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 61.4-րդ կետով.

«61.4. Սույն կանոնակարգի իմաստով՝ ազատ շրջանառելի են համարվում այն արժեթղթերը, որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ պահանջները.

1) ցուցակված են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում,
2) շրջանառվում են մեծ, խորը, ակտիվ և ցածր կենտրոնացվածություն ունեցող ռեպոյի և փողի շուկայում,
3) թողարկված չեն ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպության կողմից:»:

6) Կանոնակարգը Հավելված 11-ից հետո լրացնել Հավելված 12-ով և Հավելված 13-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան

21 ապրիլի 2020 թ., N 55-Ն

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի ապրիլի 17-ի թիվ 55-Ն որոշմամբ

«ՀԱՎԵԼՎԱԾ 12
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված
«Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության
հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ($Ն2^3$) ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. $Ն2^3$ նորմատիվը հաշվարկվում է շաբաթական և ամսական կտրվածքով: Մասնավորապես, հաշվարկվում է յուրաքանչյուր շաբաթվա կիրակի օրվա դրությամբ (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատվածի առաջին օր)՝ տվյալ օրվան հաջորդող 30 օրացուցային օրվա համար և յուրաքանչյուր ամսվա վերջին օրացուցային օրվա դրությամբ (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատվածի առաջին օր)՝ հաջորդող 30 օրացուցային օրվա համար:

2. $Ն2^3$ նորմատիվը հաշվարկելիս անհրաժեշտ է բացառել կրկնակի հաշվարկը: Այն դեպքում, երբ ակտիվը ներառված է բանկի բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում, այդ ակտիվի գծով առաջիկա 30 օրվա ընթացքում ակնկալվող դրամական մուտքերը չեն կարող միաժամանակ հաշվարկվել բանկի դրամական միջոցների ներհոսքի մեջ:

3. $Ն2^3$ նորմատիվը հաշվարկելիս վարկանշային գործակալության կողմից տրված վարկանիշներն օգտագործելու դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել սույն Կանոնակարգի հավելված 3-ի 4-րդ գլխով:

ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ($Ն2^3$) ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

4. $Ն2^3$ նորմատիվի հաշվարկին մասնակցող բանկի բարձր իրացվելի ակտիվները (այսուհետև նաև՝ ԲԻԱ) բաժանվում են երկու մակարդակի և հաշվարկվում են՝

ԲԻԱ = ԲԻԱ1 +ԲԻԱ2ա + ԲԻԱ2բ - 15% ՍՃ – 40% ՍՃ բանաձևով, որտեղ՝

ԲԻԱ1- սույն հավելվածով սահմանված առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվների հանրագումարն է՝ համապատասխան կշիռներով կշռվելուց հետո,

ԲԻԱ2ա - սույն հավելվածով սահմանված երկրորդ (ա) մակարդակի բարձր իրացվելի ակտիվների հանրագումարն է՝ համապատասխան կշիռներով կշռվելուց հետո,

ԲԻԱ2բ - սույն հավելվածով սահմանված երկրորդ (բ) մակարդակի բարձր իրացվելի ակտիվների հանրագումարն է՝ համապատասխան կշիռներով կշռվելուց հետո:

15% ՍՃ - երկրորդ (բ) մակարդակի բարձր իրացվելի ակտիվների գծով սահմանաչափի ճշգրտումն է, որը հաշվարկվում է՝

15% ՍՃ = Առավելագույնը (ճշԲԻԱ2բ– 15/85 * (ճշ ԲԻԱ1 + ճշԲԻԱ2ա), ճշԲԻԱ2բ– 15/60 *ճշ ԲԻԱ1, 0) բանաձևով,

40% ՍՃ - երկրորդ մակարդակի բարձր իրացվելի ակտիվների գծով սահմանաչափի ճշգրտումն է, որը հաշվարկվում է՝

40% ՍՃ = Առավելագույնը ((ճշԲԻԱ2ա+ ճշԲԻԱ2բ – 15% ՍՃ) – 2/3 * ճշ ԲԻԱ1, 0) բանաձևով, որտեղ՝

ճշԲԻԱ1 - սույն հավելվածով սահմանված այն բոլոր առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվների գումարն է՝ համապատասխան կշիռներով կշռելուց հետո, որը բանկը կունենա իր ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրերի՝ առաջիկա 30 օրվա ընթացքում մարման արդյունքում, որի դեպքում վերջիններիս հիմքում ընկած բարձր իրացվելի ակտիվները փոխանակվում են առաջին մակարդակի ակտիվների (այդ թվում՝ կանխիկ դրամական միջոցների) հետ,

ճշԲԻԱ2ա – սույն հավելվածով սահմանված այն բոլոր երկրորդ (ա) մակարդակի բարձր իրացվելի ակտիվների գումարն է՝ համապատասխան կշիռներով կշռելուց հետո, որը բանկը կունենա ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրերի՝ առաջիկա 30 օրվա ընթացքում մարման արդյունքում, որի դեպքում վերջիններիս հիմքում ընկած բարձր իրացվելի ակտիվները փոխանակվում են երկրորդ (ա) մակարդակի ակտիվների հետ:

ճշԲԻԱ2բ - սույն հավելվածով սահմանված այն բոլոր երկրորդ (բ) մակարդակի բարձր իրացվելի ակտիվների գումարն է՝ համապատասխան կշիռներով կշռելուց հետո, որը բանկը կունենա ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրերի՝ առաջիկա 30 օրվա ընթացքում մարման արդյունքում, որի դեպքում վերջիններիս հիմքում ընկած բարձր իրացվելի ակտիվները փոխանակվում են երկրորդ (բ) մակարդակի ակտիվների հետ:

5. Այն դեպքում, երբ մինչև 30 օր մարման ժամկետ ունեցող հակադարձ ռեպո համաձայնագրերով կամ արժեթղթերի փոխառության պայմանագրերով ներգրավված արժեթուղթը օգտագործվում է 30 օրից ավելի ժամկետայնությամբ գործարքներում (ներառյալ՝ արժեթղթի վաճառքը), հակադարձ ռեպո համաձայնագրերը կամ արժեթղթերի փոխառության պայմանագրերը չեն ներառվում սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված ճշգրտված ԲԻԱ-ի և սույն հավելվածի 41-րդ կետի Աղյուսակ 5-ի 1-4-րդ կետերով սահմանված ներհոսքի հաշվարկում:

6. Բանկի զուտ դրամական արտահոսքը առաջիկա 30 օրվա ընթացքում բոլոր ակնկալվող դրամական արտահոսքերի (այսուհետ նաև՝ ԱԴԱ) և ներհոսքերի (այսուհետ նաև՝ ԱԴՆ) հանրագումարների տարբերությունն է, բայց ոչ պակաս, քան դրամական արտահոսքերի հանրագումարի 25%-ը, մասնավորապես՝

ԶԴԱ = ԱԴԱ – նվազագույնը (ԱԴՆ; 75%* ԱԴԱ):

7. Բանկի բոլոր ակնկալվող դրամական արտահոսքերը հաշվարկվում են ՝

ԱԴԱ= ԴԱ1*ԱԿ1 + ԴԱ2*ԱԿ2 +….+ԴԱո*ԱԿո բանաձևով, որտեղ՝

ԴԱո - առաջիկա 30 օրվա ընթացքում ո-րդ դրամական արտահոսք առաջացնող հաշվեկշռային կամ արտահաշվեկշռային պարտավորության գումարն է,

ԱԿո - առաջիկա 30 օրվա ընթացքում ո-րդ դրամական արտահոսք առաջացնող հաշվեկշռային կամ արտահաշվեկշռային պարտավորության գծով սույն հավելվածով սահմանված արտահոսքի կշիռն է՝ արտահայտված տոկոսով:

8. Ն2[3] նորմատիվի հաշվարկին մասնակցող բանկի դրամական միջոցների առաջիկա 30 օրվա ընթացքում ակնկալվող զուտ արտահոսքը հաշվարկելիս բանկի կողմից արտահոսքի հնարավոր գումարների մասին որևէ այլ ենթադրություն (կանխատեսում) չի իրականացվում, քան պահանջվում է սույն հավելվածով: Օրինակ՝ բանկից չի պահանջվում կանխատեսել առաջիկա 30 օրվա ընթացքում նոր վարկերի տրամադրման հետևանքով դրամական միջոցների արտահոսքը կամ դեռևս չկնքված, սակայն սպասվող պայմանագրերից բխող դրամական միջոցների ներհոսքը, ինչպես նաև բանկի ներքին մոդելների հիման վրա դրամական միջոցների արտահոսքերի կամ ներհոսքերի հաշվարկման արդյունքները:

9. Բանկի դրամական միջոցների զուտ արտահոսքը հաշվարկելիս միջոցները հաշվարկվում են պայմանագրի համաձայն 30-օրյա ժամանակահատվածում ակնկալվող հոսքերի հանրագումարի չափով, եթե այլ բան սահմանված չէ սույն հավելվածով:

10. Բանկի բոլոր ակնկալվող դրամական ներհոսքերը հաշվարկվում են՝

ԱԴՆ= ԴՆ1*ՆԿ1 + ԴՆ2*ՆԿ2 +….+ԴՆո*ՆԿո բանաձևով, որտեղ՝

ԴՆո - առաջիկա 30 օրվա ընթացքում ո-րդ դրամական ներհոսք առաջացնող հաշվեկշռային և հետհաշվեկշռային ակտիվների գումարն է,

ՆԿո - առաջիկա 30 օրվա ընթացքում ո-րդ դրամական ներհոսք առաջացնող հաշվեկշռային և հետհաշվեկշռային ակտիվների գծով սույն հավելվածով սահմանված ներհոսքի կշիռն է՝ արտահայտված տոկոսով:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ԲԱՐՁՐ ԻՐԱՑՎԵԼԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՇԻՌՆԵՐԸ

11. Բանկի բարձր իրացվելի ակտիվների առաջին մակարդակի կազմում ընդգրկվում են հետևյալ ակտիվները՝ սույն կետի Աղյուսակ 1-ով սահմանված համապատասխան կշիռներով:

Աղյուսակ 1

Առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվներ	Կշիռը
1. Կանխիկ դրամական միջոցները (ներառյալ՝ ճանապարհին գտնվող կանխիկ), կանխիկին հավասարեցված և վճարային քարտում առկա դրամական միջոցները (բացառությամբ՝ ճանապարհին գտնվող անկանխիկ դրամական միջոցների)	100%
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում թղթակցային հաշվի միջոցները, ներդրված ավանդները, բանկի կանոնադրական կապիտալի համալրման համար բացված հաշվի մնացորդները և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ այլ պահանջներ (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում սառեցված հաշիվների)	100%
3. Սույն Կանոնակարգի հավելված 3-ի աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպությունների և միջազգային զարգացման բանկերի (multilateral development banks) կողմից թողարկված կամ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված և սույն Կանոնակարգի հավելված 3-ի աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպությունների և միջազգային զարգացման բանկերի (multilateral development banks) կողմից ամբողջությամբ երաշխավորված ազատ շրջանառելի արժեթղթերը	100%
4. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող պետությունների (կառավարությունների) և կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված և Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող պետությունների (կառավարությունների) և կենտրոնական բանկերի կողմից ամբողջությամբ երաշխավորված պարտատոմսերը	100%
5. Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված ՀՀ դրամով պարտքային արժեթղթերը	100%
6. Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արտարժույթով պարտքային արժեթղթեր՝ առավելագույնը տվյալ արտարժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի) գծով առկա զուտ արտահոսքի չափով	100%

12. Բանկի բարձր իրացվելի ակտիվների երկրորդ (ա) մակարդակի կազմում ընդգրկվում են հետևյալ ակտիվները՝ սույն կետի Աղյուսակ 2-ով սահմանված համապատասխան կշիռներով:

Աղյուսակ 2

Երկրորդ (ա) մակարդակի բարձր իրացվելի ակտիվներ	Կշիռը
1. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա-(կամ Ա3)-ից Ա+(կամ Ա1) վարկանիշ ունեցող պետությունների (կառավարությունների) և կենտրոնական բանկերի, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(կամ Աա3)-ից ԱԱԱ (կամ Աաա) վարկանիշ ունեցող օտարերկրյա տեղական կառավարման մարմինների կողմից թողարկված, կամ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված և Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա-(կամ Ա3)-ից Ա+(կամ Ա1) վարկանիշ ունեցող պետությունների (կառավարությունների) և կենտրոնական բանկերի կամ ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա տեղական կառավարման մարմինների կողմից ամբողջությամբ երաշխավորված ազատ շրջանառելի արժեթղթերը, որոնք շուկայական սթրեսային իրավիճակում հանդիսանում են իրացվելիության հուսալի աղբյուր, մասնավորապես՝ 30-օրյա սթրեսային իրավիճակներում արժեթղթի գինը առավելագույնը նվազում է 10%-ով կամ 30-օրյա իրացվելիության սթրեսի ընթացքում արժեթղթի սահմանաչափի ճշգրտումը (haircut) չի գերազանցում 10%-ը	85%
2. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթեր (բացառությամբ՝ ստորադաս պարտավորությունների), որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ պայմանները. 1) թողարկված չեն ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպության կողմից, 2) ցուցակված են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում, 3) շուկայական սթրեսային իրավիճակում հանդիսանում են իրացվելիության հուսալի աղբյուր, մասնավորապես, 30-օրյա սթրեսային իրավիճակներում արժեթղթի գինը առավելագույնը նվազում է 10%-ով կամ 30-օրյա իրացվելիության սթրեսի ընթացքում արժեթղթի սահմանաչափի ճշգրտումը (haircut) չի գերազանցում 10%-ը	85%
3. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող ապահովված պարտատոմսեր, որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ պահանջները. 1) թողարկված չեն տվյալ բանկի կամ տվյալ բանկի հետ փոխկապակցված կազմակերպության կողմից, 2) ցուցակված են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում, 3) շուկայական սթրեսային իրավիճակում հանդիսանում են իրացվելիության հուսալի աղբյուր, մասնավորապես՝ 30-օրյա սթրեսային իրավիճակներում արժեթղթի գինը առավելագույնը նվազում է 10%-ով կամ 30-օրյա իրացվելիության սթրեսի ընթացքում արժեթղթի սահմանաչափի ճշգրտումը (haircut) չի գերազանցում 10%-ը	85%

13. Բանկի բարձր իրացվելի ակտիվների երկրորդ (բ) մակարդակի կազմում ընդգրկվում են հետևյալ ակտիվները՝ սույն կետի Աղյուսակ 3-ով սահմանված համապատասխան կշիռներով:

Աղյուսակ 3

Երկրորդ (բ) մակարդակի բարձր իրացվելի ակտիվներ	**Կշիռը**
1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված ապահովված բնակարանային հիպոտեկային պարտատոմսեր	75%
2. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից ԲԲԲ-(կամ Բաա3)-ից Ա+(կամ Ա1) վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ պայմանները. 1) թողարկված չեն ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպության կողմից, 2) ցուցակված են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում, 3) շուկայական սթրեսային իրավիճակում հանդիսանում են իրացվելիության հուսալի աղբյուր, մասնավորապես՝ 30-օրյա սթրեսային իրավիճակներում արժեթղթի գինը առավելագույնը նվազում է 20%-ով կամ 30-օրյա իրացվելիության սթրեսի ընթացքում արժեթղթի սահմանաչափի ճշգրտումը (haircut) չի գերազանցում 20%-ը	50%
3. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշին համապատասխան կամ վարկանիշից բարձր վարկանիշ կամ մեկ վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթեր, որոնք ցուցակված են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ հիմնական ցուցակում	50%
4. Կանոնադրական կապիտալում մասնակցությունը հավաստող արժեթղթեր, որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ պահանջները. 1) թողարկված չեն ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպության կողմից, 2) ցուցակված են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում, 3) շուկայական սթրեսային իրավիճակում հանդիսանում են իրացվելիության հուսալի աղբյուր, մասնավորապես՝ 30-օրյա սթրեսային իրավիճակներում արժեթղթի գինը առավելագույնը նվազում է 40%-ով, կամ 30-օրյա իրացվելիության սթրեսի ընթացքում արժեթղթի սահմանաչափի ճշգրտումը (haircut) չի գերազանցում 40%-ը	50%

14. Ն2[3] նորմատիվի հաշվարկին մասնակցող բարձր իրացվելի ակտիվները պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ գործառնական պահանջները.

1) չկա իրավական, պայմանագրային կամ կարգավորման դաշտում առկա որևէ պահանջ, որը սահմանափակում է կամ կարող է սահմանափակել ակտիվի տնօրինումը,

2) բանկը ռեպո գործարքի կամ վաճառքի միջոցով կարող է ակտիվները վերածել կանխիկ դրամական միջոցների 30-օրյա սթրեսային ժամանակահատվածում՝ բանկի ընդհանուր ակտիվներից ստացվող ներհոսքի և արտահոսքի միջև ճեղքվածքը վերացնելու նպատակով,
3) դասակարգված են ստանդարտ դասով:

15. Բարձր իրացվելի ակտիվներում ներառվում է նաև Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների մեծությունը:

16. Բարձր իրացվելի ակտիվներում ներառվում են նաև ածանցյալ գործարքների գծով որպես գրավ ստացված ակտիվները, որոնք պայմանագրով սահմանված կարգով կարող են վերագրավադրվել բանկի կողմից:

17. Բարձր իրացվելի ակտիվներում չեն ներառվում վերագրավադրված (որպես գրավ ստացված ակտիվի գրավադրում) այն ակտիվները, որոնց դեպքում գրավատունն ունի պայմանագրային իրավունք պայմանագրի գործողության ընթացքում հետ պահանջելու գրավադրված ակտիվները:

18. Ն2^3 նորմատիվի հաշվարկին չեն մասնակցում բարձր իրացվելի այն ակտիվները, որոնք հաշվետու ժամանակահատվածի առաջին օրվա վերջի դրությամբ գրավադրված են բանկի կողմից ի ապահովումն բանկի ունեցած դրամական կամ այլ պարտավորությունների (այդ թվում՝ ռեպո համաձայնագրերով վաճառված (արժեթղթերի փոխառության պայմանագրով տրամադրված) արժեթղթերը), կամ որոնց գծով բանկի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը որևէ կերպ սահմանափակված է՝ իրավական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հանձնարարականների հիման վրա), պայմանագրային կամ այլ հիմքերով:

19. Բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են հակադարձ ռեպո համաձայնագրով (արժեթղթերի փոխառության պայմանագրով) ստացված բարձր իրացվելի ակտիվները, եթե դրանք չեն վաճառվել կամ գրավադրվել հաշվետու բանկի կողմից, և որոնց գծով բանկի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը որևէ կերպ սահմանափակված չէ:

20. Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում սույն հավելվածով սահմանված ակտիվներն ընդգրկվում են համախառն հաշվեկշռային արժեքով՝ բացառությամբ պարտատոմսերի, որոնք ընդգրկվում են ընթացիկ (շուկայական) արժեքով:

21. Բարձր իրացվելի ակտիվներում ընդգրկվող պարտատոմսերն ընդգրկվում են անկախ այդ պարտատոմսերի՝ մինչև մարմանը մնացած ժամկետից:

22. Սույն կանոնակարգի իմաստով՝ ակտիվի կամ պարտավորության համախառն հաշվեկշռային արժեք է համարվում վերջինիս գծով հաշվեկշռում գրանցված գումարը, ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները, առանց նրա գծով ձևավորված պահուստի, կուտակված ամորտիզացիայի կամ արժեզրկման նվազեցման, եթե այդպիսիք կան:

23. Բարձր իրացվելի ակտիվները համապատասխան կշիռներով կշռվելուց հետո նվազեցվում են առաջիկա 30 օրվա ընթացքում իրականացվելիք ոչ տոկոսային ծախսերի (բացառությամբ՝ հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսերի և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի գծով ծախսերի) չափով:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՇԻՌՆԵՐԸ

24. Բանկի դրամական միջոցների արտահոսքի հաշվարկին մասնակցում են սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ով սահմանված այն հաշվեկշռային և հետհաշվեկշռային պարտավորությունները.
1) որոնց մարման (դրանց գծով իրականացվելիք մարումների) ժամկետը չի գերազանցում 30 օրը (ներառյալ՝ ցպահանջ և անժամկետ միջոցները),

2) որոնց մարման ժամկետը գերազանցում է 30 օրը, սակայն միջոցների ներգրավման պայմանագրում առկա է որևէ պայման, որը միջոցները տրամադրող կողմին իրավունք է տալիս ներգրավված միջոցի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնել կամ միջոցներ ներգրավող կողմի համար պարտավորություն է առաջացնում վաղաժամկետ մարում իրականացնել, բացառությամբ այն դեպքի, երբ.

ա. պայմանագրում հստակ ամրագրված են հետևյալ դրույթները.

ա1. վաղաժամկետ մարում կարող է իրականացվել միայն միջոցներ տրամադրող կողմի՝ վաղաժամկետ մարում իրականացնելու պահանջ ներկայացնելու դեպքում,

ա2. վաղաժամկետ մարում իրականացնելու համար սահմանված է պահանջ ներկայացնելու պահից առնվազն 30-օրյա ժամկետ,

բ. այդ միջոցների գծով հաշվետու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ բանկը վաղաժամկետ մարման վերաբերյալ պահանջ չի ստացել,

3) որոնց մարման ժամկետը գերազանցում է 30 օրը, և միջոցների ներգրավման պայմանագրում առկա չէ որևէ պայման, որը միջոցները տրամադրող կողմին իրավունք է տալիս ներգրավված միջոցի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնել կամ միջոցներ ներգրավող կողմի համար պարտավորություն է առաջացնում վաղաժամկետ մարում իրականացնել, սակայն այդ կամ նմանատիպ այլ միջոցների գծով պարբերաբար (երկկողմանի համաձայնությամբ) վաղաժամկետ մարումներ են իրականացվել կամ ձևավորվել են ակնկալիքներ, որ կիրականացվեն վաղաժամկետ մարումներ:

25. Բանկի դրամական միջոցների արտահոսքի հաշվարկին մասնակցում են հաշվեկշռային և հետհաշվեկշռային պարտավորությունները՝ համաձայն սույն կետի Աղյուսակ 4-ով սահմանված արտահոսքի կշիռների:

Աղյուսակ 4

Դրամական արտահոսք առաջացնող հաշվեկշռային կամ հետհաշվեկշռային պարտավորություններ	Արտահոսքի կշիռ (ՀՀ դրամ)
1. Բանկի հետ չկապված ֆիզիկական անձանցից բանկային ավանդներով, բանկային հաշիվներով, փոխառություններով և այլ գործիքների միջոցով ներգրավված միջոցներ (բացառությամբ ռեպո համաձայնագրերով և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գծով բանկի պարտավորությունների)	10%
2. Բանկի հետ չկապված, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ հաստատված «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգի» հավելված 5-ի համաձայն՝ գերփոքր, փոքր և միջին դասակարգված սուբյեկտներից, ինչպես նաև բանկի հետ չկապված անհատ ձեռնարկատերերից բանկային ավանդներով, բանկային հաշիվներով, փոխառություններով և այլ գործիքների միջոցով ներգրավված միջոցներ (բացառությամբ ռեպո համաձայնագրերով և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գծով բանկի պարտավորությունների)	10%
3. Սույն Աղյուսակի 2-րդ կետում չընդգրկված, բանկի հետ չկապված ոչ ֆինանսական կազմակերպություններից, ՀՀ կառավարությունից, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններից, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա-(կամ Ա3) և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարություններից և կենտրոնական բանկերից, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից	40%

	տրամադրված ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա տեղական ինքնակառավարման մարմիններից, սույն Կանոնակարգի հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպություններից և միջազգային զարգացման բանկերից (multilateral development banks), բանկային հաշիվներով, ավանդներով, վարկերով և փոխառություններով ներգրավված միջոցներ (բացառությամբ՝ ռեպո համաձայնագրերով և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գծով բանկի պարտավորությունների)	
4.	Բանկի կողմից թողարկված պարտատոմսեր, որոնք բավարարում են սույն հավելվածի 24-րդ կետի 1-ին ենթակետին	100%
5.	Բանկի կողմից թողարկված և սույն Աղյուսակի 4-րդ կետում չընդգրկված պարտատոմսեր	40%
6.	Բանկի հետ չկապված ֆինանսական կազմակերպություններից ավանդներով, վարկերով և փոխառություններով ներգրավված միջոցները (բացառությամբ ռեպո համաձայնագրերով և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գծով բանկի պարտավորությունների)	100%
7.	Բանկի հետ կապված անձանցից բանկային հաշիվներով, ավանդներով, վարկերով և փոխառություններով ներգրավված միջոցներ (բացառությամբ՝ ռեպո համաձայնագրերով և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գծով բանկի պարտավորությունների)	100%
8.	Ռեպո համաձայնագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք ապահովված են սույն հավելվածով սահմանված առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվներով	0%
9.	Ռեպո համաձայնագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք ապահովված են սույն հավելվածով սահմանված երկրորդ (ա) մակարդակի բարձր իրացվելի ակտիվներով	15%
10.	Ռեպո համաձայնագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք ապահովված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված ապահովված հիպոտեկային պարտատոմսերով	25%
11.	ՀՀ կառավարության, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, սույն Կանոնակարգի հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպությունների և միջազգային զարգացման բանկերի (multilateral development banks) հետ կնքված ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գծով բանկի այն պարտավորությունների գումարը, որը ապահովված չէ սույն հավելվածով սահմանված առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվներով և երկրորդ (ա) մակարդակի բարձր իրացվելի ակտիվներով	25%
12.	Ռեպո համաձայնագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք ապահովված են սույն հավելվածով սահմանված երկրորդ (բ) մակարդակի բարձր իրացվելի ակտիվներով (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված ապահովված հիպոտեկային պարտատոմսերի)	50%
13.	Ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գծով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ բանկի պարտավորությունները	0%

14. Ռեպո համաձայնագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք նշված չեն սույն աղյուսակի այլ կետերում	100%
15. Ածանցյալ գործիքների գծով վճարման ենթակա զուտ դրամական միջոցները	100%
16. Իրացվելիության պահանջ ֆինանսական գործիքների, ածանցյալ գործիքների և այլ պայմանագրերի գծով՝ կապված բանկի վարկանիշի նվազման հետ. այն է՝ բարձր իրացվելի ակտիվների այն լրացուցիչ արտահոսքի գումարը, որը կարող է առաջանալ բանկի երկարաժամկետ վարկանիշի 3 մակարդակով (notch) նվազման դեպքում, եթե նման դրույթ նախատեսված է բանկի կողմից կնքված ֆինանսական գործիքների, ածանցյալ գործիքների և այլ պայմանագրերի գծով (սույն կետում նշված բարձր իրացվելի ակտիվների արտահոսքը կարող է հանդես գալ լրացուցիչ բարձր իրացվելի ակտիվների գրավադրման, պարտավորությունների ժամկետից շուտ մարման և այլ ձևերով)	100%
17. Իրացվելիության պահանջ գրավադրված առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվների արժեքի պոտենցիալ փոփոխության գծով	0%
18. Իրացվելիության պահանջ գրավադրված առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվ չհանդիսացող ակտիվների արժեքի փոփոխության գծով, այն է՝ ածանցյալ գործիքների և այլ ֆինանսական գործիքների գծով բանկի կողմից գրավադրված առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվ չհանդիսացող ակտիվները՝ ընթացիկ (շուկայական) արժեքով, եթե նշված ածանցյալ գործիքների և այլ ֆինանսական գործիքների պայմանագրով նախատեսված է բանկի պարտավորությունը համալրել կամ ավելացնել գրավը՝ գրավադրված ակտիվների շուկայական արժեքի նվազման դեպքում	20%
19. Իրացվելիության պահանջ պայմանագրով սահմանված կարգով պարտապանի պահանջով գրավի մի մասի վերադարձման գծով	100%
20. Իրացվելիության պահանջ պայմանագրով պահանջվող, բայց դեռևս չգրավադրված բարձր իրացվելի ակտիվների գծով. այն է՝ բարձր իրացվելի ակտիվների արժեքը, որոնք ըստ կնքված պայմանագրի հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվա դրությամբ պետք է գրավադրվեն բանկի կողմից, սակայն դեռևս չեն գրավադրվել	100%
21. Իրացվելիության պահանջ գրավի փոխարինում թույլատրող պայմանագրերի գծով. այն է՝ բանկի կողմից հակադարձ ռեպո համաձայնագրով (արժեթղթերի փոխառության պայմանագրով) ստացված առաջին և երկրորդ մակարդակի այն բարձր իրացվելի ակտիվները՝ ընթացիկ (շուկայական) արժեքով՝ կշռված սույն հավելվածի 11-րդ կետի Աղյուսակ 1-ով, 12-րդ կետի Աղյուսակ 2-ով , 13-րդ կետի Աղյուսակ 3-ով սահմանված համապատասխան կշռով, որոնք բանկի կողմից ներառվել են սույն հավելվածով սահմանված բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում, և որոնք գրավատուի պահանջով՝ առանց բանկի համաձայնությունը ստանալու, կարող են հետ կանչվել կամ փոխարինվել այլ՝ ոչ բարձր իրացվելի ակտիվներով	100%
22. Իրացվելիության պահանջ ածանցյալ գործիքների շուկայական արժեքի փոփոխության գծով. այն է՝ դրամական միջոցների զուտ արտահոսքի գումարը, որը կարող է առաջանալ ածանցյալ գործիքների գնային տատանումների արդյունքում (այդ թվում՝ ածանցյալ գործիքների գծով բանկի կողմից դեպոնացված (սառեցված) մարժայի ավելացման միջոցով)	100%

23. Բանկի հետ չկապված, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ հաստատված «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգի» հավելված 5-ի համաձայն՝ գերփոքր, փոքր և միջին դասակարգված սուբյեկտների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց նկատմամբ վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների չօգտագործված մասը (բացառությամբ՝ երաշխավորությունների, երաշխիքների)	5%
24. Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա-(կամ Ա3) և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա տեղական ինքնակառավարման մարմինների, բանկի հետ չկապված և սույն Աղյուսակի 23-րդ կետում չընդգրկված ոչ ֆինանսական կազմակերպությունների, սույն Կանոնակարգի հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպությունների և միջազգային զարգացման բանկերի (multilateral development banks) նկատմամբ վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների չօգտագործված մասը (բացառությամբ՝ երաշխավորությունների, երաշխիքների)	10%
25. Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա-(կամ Ա3) և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա տեղական ինքնակառավարման մարմինների, բանկի հետ չկապված սույն Աղյուսակի 23-րդ կետում չընդգրկված ոչ ֆինանսական կազմակերպությունների, սույն Կանոնակարգի հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպությունների և միջազգային զարգացման բանկերի (multilateral development banks) նկատմամբ վարկային ռիսկ պարունակող իրացվելիության գծերի չօգտագործված մասը (բացառությամբ՝ երաշխավորությունների, երաշխիքների)	30%
26. Բանկի հետ չկապված ռեզիդենտ և օտարերկրյա բանկերի նկատմամբ վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների չօգտագործված մասը (բացառությամբ՝ երաշխավորությունների, երաշխիքների)	40%
27. Բանկի հետ չկապված ռեզիդենտ և օտարերկրյա ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների չօգտագործված մասը (բացառությամբ՝ երաշխավորությունների, երաշխիքների)	40%
28. Բանկի հետ չկապված ռեզիդենտ և օտարերկրյա ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վարկային ռիսկ պարունակող իրացվելիության գծերի չօգտագործված մասը (բացառությամբ՝ երաշխավորությունների, երաշխիքների)	100%

29. Բանկի մասնակիցների և բանկի հետ կապված անձանց նկատմամբ վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների չօգտագործված մասը (բացառությամբ՝ երաշխավորությունների, երաշխիքների)	100%
30. Սույն աղյուսակի 23-29-րդ կետերում նշված անձանցից տարբեր այլ անձանց նկատմամբ վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների չօգտագործված մասը (բացառությամբ՝ երաշխավորությունների, երաշխիքների)	100%
31. Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, եթե սույն աղյուսակով այլ բան նախատեսված չէ	100%
32. Ֆիզիկական անձանց և ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ սույն աղյուսակում չնշված վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, եթե առաջիկա 30 օրվա ընթացքում դրանց գծով սպասվող արտահոսքը գերազանցում է սպասվող ներհոսքի 50%-ը	100%
33. Բանկի կողմից տրված երաշխիքներ, երաշխավորություններ	10%
34. Բանկի կողմից տրված ակրեդիտիվներ	5%
35. Սույն աղյուսակում չնշված այլ միջոցներ	100%

26. Այն դեպքում, երբ բանկը հաշվետու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ բացահայտում է սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 5-րդ կետով սահմանված բոլոր պարտատոմսերի սեփականատերերին, բանկի կողմից թողարկված պարտատոմսերը դրամական միջոցների արտահոսքի հաշվարկին կարող են մասնակցել ըստ տվյալ սուբյեկտից ներգրաված միջոցների արտահոսքի կշռի՝ համաձայն սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 1-3-րդ և 6-7-րդ կետերի: Նման մոտեցման կիրառման դեպքում բանկերը տարին մեկ անգամ ընտրում են սույն կետում նշված մոտեցումը, որով պետք է առաջնորդվեն, և այդ մասին տեղեկացնում են Կենտրոնական բանկին՝ մինչև յուրաքանչյուր տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ը:

27. Այն դեպքում, երբ բանկն ընտրում է սույն հավելվածի 26-րդ կետով սահմանված մոտեցումը, այդ մոտեցումը կիրառում է բոլոր պարտատոմսերի գծով, իսկ մոտեցման փոփոխության դեպքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով վերջինիս հիմնավորումը:

28. Սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 15-րդ կետով սահմանված ածանցյալ գործիքների գծով առաջիկա 30 օրվա ընթացքում վճարման ենթակա դրամական միջոցները հաշվարկելիս տվյալ գործընկերոջ գծով ածանցյալ գործիքի արտահոսքի գումարը հաշվարկվում է զուտ մեծությամբ՝ զուտացման մասին համապատասխան պայմանագրի առկայության դեպքում (master netting agreement): Օպցիոնների գծով դրամական միջոցների արտահոսքը ներառվում է միայն այն դեպքում, երբ օպցիոնը թողարկվել է (written) հաշվետու բանկի կողմից, և օպցիոնը դրական արժեք ունի օպցիոնի գնորդի համար հաշվետու ժամանակահատվածի առաջին օրվա վերջի դրությամբ (in the money), և այն կարող է իրականացվել (exercise) առաջիկա 30 օրվա ընթացքում:

29. Ընդ որում, յուրաքանչյուր նշանակալի արժույթի (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների) գծով Ն2[3] նորմատիվի հաշվարկում սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 15-րդ կետով սահմանված ածանցյալ գործիքների գծով առաջիկա 30 օրվա ընթացքում վճարման ենթակա դրամական միջոցները հաշվարկելիս տվյալ գործընկերոջ գծով ածանցյալ գործիքի արտահոսքի գումարը կարող է զուտ մեծությամբ չհաշվարկվել, եթե բավարարված է սույն Կանոնակարգի 56.2-րդ կետի 1-4 ենթակետերով սահմանված պայմաններից մեկը, և համաձայն պայմանագրի՝ գործարքի կողմերը

չունեն պարտավորություն և (կամ) իրավունք իրենց պարտավորությունները կատարել հաշվանցով և (կամ) զուտացմամբ:

30. Եթե սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 16-րդ կետով սահմանված դրույթները պայմանագրով սահմանված են բանկի կարճաժամկետ վարկանիշի նկատմամբ, ապա հիմք է ընդունվում համապատասխանող երկարաժամկետ վարկանիշը: Օրինակ, եթե Ստանդարտ ընդ Փուրզ վարկանշային գործակալության կողմից բանկին տրամադրվել է «Ա» երկարաժամկետ վարկանիշ և «Ա-1» կարճաժամկետ վարկանիշ, ապա երկարաժամկետ վարկանիշի 3 մակարդակով նվազման դեպքում բանկի երկարաժամկետ վարկանիշը կդառնա «ԲԲԲ», որին համապատասխանող կարճաժամկետ վարկանիշը կլինի «Ա-3»:

31. Եթե բանկի կողմից կնքված պայմանագրերի գծով բանկի վարկանիշի նվազման դեպքում նախատեսված է պարտավորությունների ժամկետից շուտ մարման դրույթ, և նույն անձից ներգրավված միջոցներն արդեն իսկ արտացոլված են սույն հավելվածով սահմանված կարգով դրամական միջոցների արտահոսքի հաշվարկում, ապա սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 16-րդ կետով սահմանված դրույթները կիրառվում են միայն լրացուցիչ արտահոսքի գծով գումարի նկատմամբ, ըստ հետևյալ բանաձևի՝

Լրացուցիչ արտահոսք = Առավելագույնը {0, Դրամական միջոցների արտահոսք բանկի վարկանիշի նվազման դեպքում – Ներգրավված միջոց X Արտահոսքի կշիռ}

32. Սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 21-րդ կետը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ գրավատուն կարող է փոխարինել բարձր իրացվելի ակտիվը մեկ այլ, ավելի ցածր մակարդակի բարձր իրացվելի ակտիվով, այն է՝ առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվը երկրորդ (ա) կամ երկրորդ (բ) մակարդակի բարձր իրացվելի ակտիվով, կամ երկրորդ (ա) մակարդակի բարձր իրացվելի ակտիվը երկրորդ (2բ) մակարդակի բարձր իրացվելի ակտիվով: Տվյալ դեպքում դրամական արտահոսքի մեծությունը որոշվում է որպես ստացվելիք բարձր իրացվելի ակտիվների ընթացիկ (շուկայական) արժեքի և համապատասխան բարձր իրացվելի ակտիվների կշիռների միջև տարբերության արտադրյալ: Եթե գրավատուն փոխարինման դեպքում կարող է փոփոխել նաև բարձր իրացվելի ակտիվների ընթացիկ (շուկայական) արժեքը, ապա պետք է հիմք ընդունվի հնարավոր ամենացածր ընթացիկ (շուկայական) արժեքը:

33. Սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 16-րդ, 18-րդ և 21-22-րդ կետերով սահմանված գումարը հաշվարկվում է այն դեպքում, երբ սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 16-րդ, 18-րդ և 21-22-րդ կետերով սահմանված պայմանների ի հայտ գալու դեպքում (հիպոթետիկ) բանկի՝ այդ ենթակետերով սահմանված պարտավորության կատարումը, ըստ պայմանագրի, պետք է տեղի ունենա հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում:

34. Սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 22-րդ կետով սահմանված գումարը որոշվում է՝ հիմք ընդունելով դրամական միջոցների արտահոսքի (այդ թվում՝ դեպոնացված մարժայի ավելացման) այն գումարը, որը բանկը կունենա ածանցյալների հիմքում ընկած ակտիվների գների՝ հաշվետու ժամանակահատվածի առաջին օրվան նախորդող 24 ամսվա ընթացքում դիտարկված 30-օրյա առավելագույն տատանումների պատմական սցենարի կրկնության արդյունքում: Արտահոսքի գումարը հաշվարկելու համար հիմք է ընդունվում այն 30-օրյա պատմական ժամանակահատվածը, որի դեպքում ածանցյալ գործիքի կամ ածանցյալների պորտֆելի գծով իրացվելիության պահանջն առավելագույնն է: Կիրառվող 30-օրյա ժամանակահատվածը որոշելիս ածանցյալները կարող են խմբավորվել ըստ հիմքում ընկած ակտիվների տեսակների (օրինակ՝ արժութային ածանցյալներ): Հաշվարկված իրացվելիության լրացուցիչ պահանջները կարող են զուտացվել միայն ըստ գործընկերների՝ ներառյալ արդեն առկա դեպոնացված (սառեցված) միջոցները:

35. Սույն հավելվածի 25-րդ կետի Աղյուսակ 4-ի 25-րդ և 28-րդ կետերի իմաստով՝ իրացվելիության գիծը ցանկացած հետհաշվեկշռային պայմանական պարտավորություն է, որն օգտագործվում է հաճախորդի պարտքը վերաֆինանսավորելու համար, երբ հաճախորդն ի վիճակի չի լինում ֆինանսական շուկաներում սպասարկել իր պարտքը: Սույն կետով սահմանված իրացվելիության գծի մեջ ներառվում են միայն հաճախորդի առաջիկա 30-օրյա ժամանակահատվածում մարման ենթակա պարտքը սպասարկելու համար անհրաժեշտ միջոցները:

36. Բանկի դրամական միջոցների արտահոսքի հաշվարկում ընդգրկվող բանկային հաշիվները ներառում են նաև մետաղական հաշիվները:

37. Բանկի դրամական միջոցների արտահոսքը հաշվարկելիս բանկերի՝ տվյալ բանկում առկա «լորո» թղթակցային հաշիվների և ցպահանջ ու անժամկետ ավանդների մնացորդը նվազեցվում է (համապատասխան արժույթով) նույն բանկում առկա «նոստրո» թղթակցային հաշվի և ներդրված ցպահանջ ու անժամկետ ավանդների մնացորդի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան «լորո» թղթակցային հաշվի և ցպահանջ ու անժամկետ ավանդների մնացորդն է:

38. Բանկի դրամական միջոցների արտահոսքը հաշվարկելիս չեն ներառվում բանկում ներդրված այն դրամական միջոցները, որոնք բավարարում են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

1) Գրավադրված են ի ապահովումն բանկի կողմից տրամադրված վարկի (փոխառության),
2) Գրավի պայմանագրով հստակ սահմանված է, որ հաճախորդն իրավունք չունի պահանջել բանկից ստանալ բանկում ներդրված դրամական միջոցները՝ նախքան վարկի ամբողջական մարումը,
3) Գրավադրված դրամական միջոցի մեծությունը չի գերազանցում համապատասխան վարկի (փոխառության) մնացորդային մեծությունը (մայր գումար և հաշվեգրված տոկոս, տույժ, տուգանք), կամ այն դեպքում, երբ գրավադրված դրամական միջոցի մեծությունը գերազանցում է համապատասխան վարկի (փոխառության) մնացորդային մեծությունը, ապա արտահոսքը հաշվարկելիս չի ընդգրկվում միայն վարկի (փոխառության) մնացորդային մեծությունը չգերազանցող մասը: Ընդ որում, արտահոսքի հաշվարկում անհրաժեշտ է ընդգրկել այն դրամական միջոցների մեծությունը, որոնք գրավադրված են ի ապահովումն վարկային գծի չօգտագործված մասի:

39. Ընդ որում, այն դեպքում, երբ գրավադրված դրամական միջոցը և բանկի կողմից տրամադրված վարկը (փոխառությունը) արտահայտված են տարբեր արժույթներով, գրավադրված դրամական միջոցի մեծությունը հաշվարկվում է՝

Գրավադրված դրամական միջոց = Գրավադրված դրամական միջոց*(1-արժույթի տատանման գործակից) բանաձևով, որտեղ արժույթի տատանման գործակիցը 8% է:

ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔԻ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՇԻՌՆԵՐԸ

40. Բանկի դրամական միջոցների ներհոսքի հաշվարկին մասնակցում են այն ակտիվների գծով ակնկալվող ներհոսքերը (ներառյալ՝ հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները), որոնք դասակարգված են ստանդարտ դասով և որոնց գծով չկա որևէ հիմք կասկածելու, որ այդ ակտիվի գծով պայմանագրով սահմանված վճարումները չեն իրականացվի առաջիկա 30 օրվա ընթացքում:
41. Բանկի դրամական միջոցների ներհոսքի հաշվարկին մասնակցում են հաշվեկշռային և հետհաշվեկշռային ակտիվները՝ համաձայն սույն կետի Աղյուսակ 5-ով սահմանված ներհոսքի կշիռների:

Դրամական միջոցների ներհոսք առաջացնող հաշվեկշռային կամ հետհաշվեկշռային ակտիվներ	**Ներհոսքի ժամկետ**	**Ներհոսքի կշիռ**
1. Հակադարձ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք ապահովված են սույն հավելվածով սահմանված առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվների տեսակներով	Մինչև մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 30 օրը	0%
2. Հակադարձ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք ապահովված են սույն հավելվածով սահմանված երկրորդ (ա) մակարդակի բարձր իրացվելի ակտիվների տեսակներով	Մինչև մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 30 օրը	15%
3. Հակադարձ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք ապահովված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված ապահովված բնակարանային հիպոտեկային պարտատոմսերով	Մինչև մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 30 օրը	25%
4. Հակադարձ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք ապահովված են սույն հավելվածով սահմանված երկրորդ (բ) մակարդակի բարձր իրացվելի ակտիվների տեսակներով (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված ապահովված բնակարանային հիպոտեկային պարտատոմսերի)	Մինչև մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 30 օրը	50%
5. Հակադարձ ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, որոնք նշված չեն սույն աղյուսակի այլ ենթակետերում	Մինչև մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 30 օրը	100%
6. Չօգտագործված վարկային գծերը, երաշխիքները, ակրեդիտիվները և վարկային ռիսկ պարունակող այլ հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, բացառությամբ այն չօգտագործված վարկային գծերի, որոնց պայմանագիրը պարունակում է դրույթ, որով տրամադրող կողմը պայմանագրի գործողության ընթացքում պարտավորվում է չօգտագործված վարկային գիծը հասանելի դարձնել առանց որևէ սահմանափակման		0%
7. Սույն Աղյուսակի 6-րդ կետում չընդգրկված չօգտագործված վարկային գծերը		100%
8. Ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ հաստատված «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգի» հավելված 5-ի համաձայն գերփոքր, փոքր և միջին դասակարգված սուբյեկտների նկատմամբ ունեցած պահանջների գծով ստացման ենթակա մայր գումարի, տոկոսների և այլ վճարների հանրագումարը	Առաջիկա 30 օրվա ընթացքում	50%

9. Սույն Աղյուսակի 8-րդ կետում չընդգրկված ոչ ֆինանսական կազմակերպությունների, ՀՀ կառավարության, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա-(կամ Ա3) և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(կամ Աա3) և բարձր վարկանիշ ունեցող տեղական ինքնակառավարման մարմինների, սույն Կանոնակարգի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպությունների և միջազգային զարգացման բանկերի (multilateral development banks) նկատմամբ սույն աղյուսակի 1-6-րդ կետերում չընդգրկված պահանջների հանրագումարը	Առաջիկա 30 օրերի ընթացքում	50%
10. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա-(կամ Ա3) և բարձր վարկանիշ ունեցող կենտրոնական բանկերի, ՀՀ ֆինանսական կազմակերպությունների, ԲԲԲ-(կամ Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերի և Ա-(կամ Ա3) և բարձր վարկանիշ ունեցող ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ սույն աղյուսակի 1-6-րդ կետերում չընդգրկված պահանջների հանրագումարը	Առաջիկա 30 օրվա ընթացքում, այդ թվում՝ ցպահանջ	100%
11. Սույն հավելվածի 11-րդ կետի Աղյուսակ 1-ում ներառված բարձր իրացվելի ակտիվներում չընդգրկած արժեթղթերի գծով ներհոսքեր	Մինչև մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 30 օրը	100%
12. Ածանցյալ գործիքների գծով զուտ դրամական ներհոսքեր		100%
13. Սույն աղյուսակում չնշված այլ միջոցներ	Առաջիկա 30 օրվա ընթացքում (այդ թվում՝ ցպահանջ):	0%

42. Սույն հավելվածի 41-րդ կետի Աղյուսակ 5-ի 12-րդ կետով սահմանված ածանցյալ գործիքների գծով առաջիկա 30 օրվա ընթացքում վճարման ենթակա դրամական միջոցները հաշվարկելիս տվյալ գործընկերոջ գծով ածանցյալ գործիքի ներհոսքի գումարը հաշվարկվում է զուտ մեծությամբ՝ զուտացման մասին համապատասխան պայմանագրի առկայության դեպքում (master netting agreement): Օպցիոնների գծով դրամական միջոցների ներհոսքը ներառվում է միայն այն դեպքում, երբ օպցիոնը թողարկվել է (written) հաշվետու բանկի կողմից, և օպցիոնը դրական արժեք ունի օպցիոնի գնորդի համար հաշվետու ժամանակահատվածի առաջին օրվա վերջի դրությամբ (in the money), և այն կարող է իրականացվել (exercise) առաջիկա 30 օրվա ընթացքում:

43. Ընդ որում, յուրաքանչյուր նշանակալի արժույթով (կամ առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթներով) գծով Ն23 նորմատիվի հաշվարկում սույն հավելվածի 41-րդ կետի Աղյուսակ 5-ի 12-րդ կետով սահմանված ածանցյալ գործիքների գծով առաջիկա 30 օրվա ընթացքում վճարման ենթակա դրամական միջոցները հաշվարկելիս տվյալ գործընկերոջ գծով ածանցյալ գործիքի ներհոսքի գումարը կարող է զուտ մեծությամբ չհաշվարկվել, եթե բավարարված է սույն Կանոնակարգի 56.2-րդ կետի 1-4 ենթակետերով սահմանված պայմաններից մեկը, և, համաձայն պայմանագրի, գործարքի կողմերը

չունեն պարտավորություն և (կամ) իրավունք իրենց պարտավորությունները կատարել հաշվանցով և (կամ) զուտացմամբ:

44. Բանկի դրամական միջոցների ներհոսքի հաշվարկում ընդգրկվող բանկային հաշիվները ներառում են նաև մետաղական հաշիվները:

45. Բանկի դրամական միջոցների ներհոսքը հաշվարկելիս բանկերի թղթակցային հաշիվների, ցպահանջ և անժամկետ ավանդների մնացորդները նվազեցվում են (համապատասխան արժույթով) նույն բանկի նկատմամբ ունեցած «լորո» թղթակցային հաշիվների, ցպահանջ և անժամկետ ավանդային պարտավորությունների չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան «նոստրո» թղթակցային հաշվի, ցպահանջ և անժամկետ ավանդի մնացորդն է:

46. Այն ակտիվների գծով, որոնք անժամկետ են, դրամական միջոցների ներհոսքը հաշվի չի առնվում, բացառությամբ մայր գումարի, տոկոսների և այլ վճարների այն նվազագույն չափի, որը պայմանագրի համաձայն ենթակա է մարման պարտապանի կողմից առաջիկա 30 օրվա ընթացքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 13

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված
«Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության
հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի

ԶՈՒՏ ԿԱՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ($Ն2^4$) ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. $Ն2^4$ նորմատիվի հաշվարկին մասնակցող բանկին հասանելի կայուն միջոցները բանկի հաշվեկշռի պասիվային մասում գրանցված բանկի կապիտալի այն գործիքներն ու պարտավորություններն են, որոնք, սպասվում են, որ հասանելի կլինեն բանկին առաջիկա մեկ տարվա ընթացքում:

2. $Ն2^4$ նորմատիվի հաշվարկին մասնակցող բանկին անհրաժեշտ կայուն միջոցների չափը որոշվում է՝ ելնելով բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային ակտիվների իրացվելիության մակարդակից և ժամկետայնությունից:

3. $Ն2^4$ նորմատիվը հաշվարկելիս վարկանշային գործակալության կողմից տրված վարկանիշներն օգտագործելու դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել սույն կանոնակարգի հավելված 3-ի 4-րդ գլխով:

4. $Ն2^4$ նորմատիվը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրացուցային օրվա (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատվածի առաջին օր) դրությամբ առկա տվյալների հիման վրա:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻՆ ՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՅՈՒՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՇԻՌՆԵՐԸ

5. Բանկին հասանելի կայուն միջոցների կազմում ընդգրկվում են բանկի կապիտալի գործիքները, հաշվեկշռային և հետհաշվեկշռային պարտավորությունները՝ համաձայն սույն կետի Աղյուսակ 1-ով սահմանված կշիռների.

Աղյուսակ 1

Հասանելի կայուն միջոցներ	Հասանելի կայուն միջոցների ժամկետը	Կշիռը
1. Հիմնական կապիտալի տարրերի հանրագումարը. այն է՝ սույն Կանոնակարգի 28.1-րդ կետի 1-ին ենթակետում նշված տարրերի հանրագումարը, ընդ որում, նշված տարրերից չեն պակասեցվում սույն Կանոնակարգի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նվազեցումները՝ բացառությամբ 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված նվազեցումների		100%

2. Լրացուցիչ կապիտալի հետևյալ տարրերի հանրագումարը՝ 1) Ֆինանսական և նյութական ակտիվների վերագնահատման պահուստ, 2) Այլ պահուստներ, 3) Սույն Կանոնակարգի 28.2-րդ կետի «գ» պարբերությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսեր, 4) Սույն Կանոնակարգի 28.2-րդ կետի «դ» պարբերությամբ սահմանված ստորադաս փոխառություններ, եթե, դրանց մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է մեկ տարին		100%
3. Բանկի հետ չկապված իրավաբանական անձանցից ներգրավված ավանդներ, վարկեր, փոխառություններ և այլ պարտավորություններ (ներառյալ՝ բանկի կողմից թողարկված պարտատոմսեր)	Մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է 1 տարին	100%
4. Բանկի հետ չկապված ֆիզիկական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ներգրավված միջոցները	Անկախ Ժամկետից	90%
5. Բանկի հետ չկապված, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ հաստատված «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգի» Հավելված 5-ի համաձայն գերփոքր, փոքր և միջին դասակարգված սուբյեկտներից բանկային ավանդներով և բանկային հաշիվներով ներգրավված միջոցները	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում մեկ տարին (ներառյալ՝ ցպահանջ և անժամկետ)	90%
6. Սույն աղյուսակի 5-րդ կետում չընդգրկված, բանկի հետ չկապված ոչ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 1 տարին (ներառյալ՝ ցպահանջ և անժամկետ միջոցները)	50%
7. Հայաստանի Հանրապետության կառավարությունից, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններից, օտարերկրյա պետական մարմիններից, սույն Կանոնակարգի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպություններից և միջազգային զարգացման բանկերից (multilateral development banks) ներգրավված միջոցները (այդ թվում՝ հետաձգված հարկային պարտավորությունները)	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 1 տարին (ներառյալ՝ ցպահանջ և անժամկետ միջոցները)	50%
8. Կենտրոնական բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները	Մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է 6 ամիսը, բայց չի գերազանցում 1 տարին	50%
9. Սույն աղյուսակում չնշված այլ միջոցներ (ներառյալ բանկի կողմից թողարկված պարտատոմսեր)	Մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է 6 ամիսը, բայց չի գերազանցում 1 տարին	50%

10. Բանկի մասնակիցներից և բանկի հետ կապված ֆիզիկական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ավանդներով, վարկերով և փոխառություններով ներգրավված միջոցներ (բացառությամբ սույն աղյուսակի երկրորդ կետում ներառվող ստորադաս փոխառությունների)	Անկախ ժամկետից	0%
11. Ածանցյալ գործիքների գծով զուտ պարտավորության և բանկի ակտիվներում արտացոլված ածանցյալ գործիքների հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը		0%
12. Ռեպո համաձայնագրերով ներգրավված միջոցները և ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պարտավորությունները		0%
13. Ռեզիդենտ և օտարերկրյա բանկերի՝ հաշվետու բանկում առկա «լորո» թղթակցային հաշիվների և ցպահանջ ավանդների մնացորդը		0%
14. Սույն Կանոնակարգի 28.2-րդ կետի «դ» պարբերությամբ սահմանված ստորադաս փոխառությունները	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 6 ամիսը	0%
15. Այլ անձանց կողմից բանկին տրամադրված և դեռևս բանկի կողմից չօգտագործված վարկային գծերը, երաշխիքները, ակրեդիտիվները և իրացվելիության տրամադրման նմանատիպ այլ գործիքներ, բացառությամբ այն չօգտագործված վարկային գծերի, որոնց պայմանագիրը պարունակում է դրույթ, որով տրամադրող կողմը պայմանագրի գործողության ընթացքում պարտավորվում է չօգտագործված վարկային գիծը հասանելի դարձնել առանց որևէ սահմանափակման		0%
16. Պարտավորությունները, որոնք հաշվետու բանկի կողմից չեն կատարվել պայմանագրով սահմանված ժամկետում, ինչպես նաև դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները		0%
17. Սույն աղյուսակում չնշված այլ միջոցներ	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 6 ամիսը	0%

6. Բանկի հետ կապված և բանկի մասնակից հանդիսացող իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները հասանելի կայուն միջոցների կազմում ընդգրկվում են սույն հավելվածի 5-րդ կետի Աղյուսակ 1-ի համապատասխան հոդվածների համար սահմանված կշիռներից 50 տոկոսով ավելի ցածր կշռով:

7. Հասանելի կայուն միջոցների հաշվարկման ժամանակ հիմք են ընդունվում հասանելի կայուն միջոցների համախառն հաշվեկշռային արժեքները:

8. Հասանելի կայուն միջոցների ժամկետների հաշվարկը սկսվում է հաշվետու ժամանակահատվածի առաջին օրվան հաջորդող օրվանից:

9. Այն դեպքում, երբ սույն հավելվածի 5-րդ կետի Աղյուսակ 1-ով սահմանված ներգրավված միջոցների գծով պայմանագրով մասնակի մարումներ են նախատեսված, տվյալ մասի նկատմամբ կիրառվում

են սույն հավելվածի 5-րդ կետի Աղյուսակ 1-ի այն համապատասխան կետի պահանջները, որի ժամկետայնությանը համապատասխանում է տվյալ գումարը:

10. Սույն հավելվածի 5-րդ կետի Աղյուսակ 1-ի 7-րդ կետով սահմանված հետաձգված հարկային պարտավորությունները բանկին հասանելի կայուն միջոցների կազմում ընդգրկվում են՝ ըստ հարկային պարտավորությունների հետագա մարման ամենամոտ հավանական ժամկետի:

11. Սույն հավելվածի 5-րդ կետի Աղյուսակ 1-ով սահմանված «լորո» թղթակցային հաշվի և ցպահանջ ավանդի մեծությունը նվազեցվում է (համապատասխան արժույթով) նույն բանկում առկա «նոստրո» թղթակցային հաշվի և ներդրված ցպահանջ ավանդների չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան «լորո» թղթակցային հաշվի և ցպահանջ ավանդի մնացորդն է:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՅՈՒՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՇԻՌՆԵՐԸ

12. Բանկին անհրաժեշտ կայուն միջոցների կազմում ընդգրկվում են բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային ակտիվները՝ համաձայն սույն կետի Աղյուսակ 2-ով սահմանված կշիռների.

Աղյուսակ 2

Անհրաժեշտ կայուն միջոցներ	Միջոցների ժամկետայնություն	Կշիռ
1. Կանխիկ դրամական միջոցները (ներառյալ՝ բանկոմատներում գտնվող դրամական միջոցները), կանխիկին հավասարեցված և վճարային քարտում առկա դրամական միջոցները (բացառությամբ՝ ճանապարհին գտնվող անկանխիկ դրամական միջոցների)		0%
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում թղթակցային հաշվի միջոցները, ներդրված ավանդները, բանկի կանոնադրական կապիտալի համալրման համար բացված հաշվի մնացորդները		0%
3. Կենտրոնական բանկի նկատմամբ այլ պահանջներ (բացառությամբ՝ Կենտրոնական բանկում սառեցված հաշիվների)	Մինչև մարման ժամկետը չի գերազանցում 6 ամիսը	0%
4. Մեկ աշխատանքային օրանոց (օվերնայթ) վարկային պայմանագրերով տրամադրված միջոցներ, եթե վարկառուն հանդիսանում է Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման ԲԲԲ+(Բաա1) և ԲԲԲ+(Բաա1)-ից բարձր վարկանիշ ունեցող ոչ ռեզիդենտ բանկ		0%

5. Ֆինանսական գործիքների, արժույթի (արտարժույթի) և թանկարժեք մետաղների վաճառքից ստացվելիք գումարները	Ենթակա են ստացման գործարքի կնքման օրվանից առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում և ժամկետանց չեն	0%
6. Հայաստանի Հանրապետության կառավարության, կենտրոնական բանկի, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված ազատ շրջանառելի արժեթղթեր (այդ թվում՝ ռեպո համաձայնագրով վաճառված)՝ ընթացիկ (շուկայական) արժեքով		5%
7. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված ԱԱ-(Aա3) և բարձր վարկանիշ ունեցող պետությունների (կառավարությունների), կենտրոնական բանկերի, տեղական ինքնակառավարման մարմինների, Սույն Կանոնակարգի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպությունների, միջազգային զարգացման բանկերի (multilateral development banks), Միջազգային հաշվարկների բանկի, Եվրոպական կոմիտեի (European community) կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված ազատ շրջանառելի արժեթղթեր (այդ թվում՝ ռեպո համաձայնագրով վաճառված)՝ ընթացիկ (շուկայական) արժեքով		5%
8. Չվերականգնվող վարկային գծերի չօգտագործված մասը		5%
9. Բանկի այն ռեպո համաձայնագրերի և արժեթղթերի փոխառության պայմանագրերի գումարը, որը ամբողջությամբ ապահովված է սույն աղյուսակի 6-7-րդ կետերով սահմանված արժեթղթերի տեսակներով	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 6 ամիսը	10%
10. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից տրամադրված Ա-(A3)-ից Ա+(A1) վարկանիշ ունեցող պետությունների (կառավարությունների) և կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված ազատ շրջանառելի արժեթղթեր (այդ թվում՝ ռեպո համաձայնագրով վաճառված)՝ ընթացիկ (շուկայական) արժեքով		15%

11. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից ԱԱ-(Աա3) և բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ պարտատոմսերը (այդ թվում՝ ռեպո համաձայնագրով վաճառված)՝ ընթացիկ (շուկայական) արժեքով		15%
12. Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ունեցած պահանջներ	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 6 ամիսը (ներառյալ՝ ցպահանջ կամ անժամկետ)	15%
13. Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ (բացառությամբ՝ երաշխավորությունների (երաշխիքների և չվերականգնվող վարկային գծերի չօգտագործված մասի))		20%
14. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից ԱԱ (Աա2) և բարձր վարկանիշ ունեցող ապահովված բնակարանային հիպոտեկային պարտատոմսերը		50%
15. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված ապահովված բնակարանային հիպոտեկային պարտատոմսերը (այդ թվում՝ ռեպո համաձայնագրով վաճառված)՝ ընթացիկ (շուկայական) արժեքով		50%
16. Ազատ շրջանառելի սովորական բաժնետոմսերը, որոնք թողարկված չեն ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպության կողմից		50%
17. Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (կամ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների կողմից ԲԲԲ-(Բաա3)-ից Ա+(Ա1) վարկանիշ ունեցող կորպորատիվ պարտատոմսերը (այդ թվում՝ ռեպո համաձայնագրով վաճառված)՝ ընթացիկ (շուկայական) արժեքով		50%
18. Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր	Մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է 6 ամիսը, բայց չի գերազանցում 1 տարին	50%

19. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշին համապատասխան, վարկանիշից բարձր կամ մեկ վարկանիշ ցածր վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով, որոնք ցուցակված են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում		50%
20. Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց (ներառյալ՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի), կառավարություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրված վարկերի և այլ պահանջների գումարը, որը նշված չէ սույն աղյուսակի այլ կետերում և դասակարգված է ստանդարտ դասում	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 1 տարին	50%
21. Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց տրամադրված վարկերի և այլ պահանջների գումարը, որը սահմանված չէ սույն աղյուսակի այլ կետերում, դասակարգված է ստանդարտ դասում, գրավադրված չէ և սույն Կանոնակարգի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ի համաձայն՝ ունի 35% կամ ավելի ցածր ռիսկի կշիռ	Մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է 1 տարին	65%
22. Ներդրումներ բարձր իրացվելի ակտիվ չհամարվող արժեթղթերում, որոնք դասակարգված են որպես ոչ ռիսկային և գրավադրված չեն	Մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է 1 տարին	85%
23. Բանկի թանկարժեք մետաղները՝ հաշվեկշռային արժեքով, ներառյալ՝ բանկային ոսկին, ստանդարտացված ձուլակտորները		85%
24. Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց (ներառյալ՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի), կառավարություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրված վարկերի և այլ պահանջների գումարը, որը նշված չէ սույն աղյուսակի այլ կետերում, դասակարգված է ստանդարտ դասում և գրավադրված չէ	Մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է 1 տարին	85%

25. Հիմնական միջոցներ (բացառությամբ նորմատիվային կապիտալից նվազեցվող հիմնական միջոցների)		100%
26. Չաշխատող ակտիվներ		100%
27. Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված միջոցները	Մարմանը մնացած ժամկետը հավասար է կամ գերազանցում է 1 տարին	100%
28. Նորմատիվային կապիտալից նվազեցվող ակտիվներ		100%
29. Բանկի ակտիվներում արտացոլված ածանցյալ գործիքների հաշվեկշռային արժեքի և ածանցյալ գործիքների գծով զուտ պարտավորության դրական տարբերությունը		100%
30. Բանկի կողմից տրված երաշխիքների, երաշխավորությունների գումարը		20%
31. Այլ ռեպո համաձայնագրերի, արժեթղթերի փոխառության պայմանագրերի գումարը	Մարմանը մնացած ժամկետը չի գերազանցում 6 ամիսը	15%
32. Սույն աղյուսակում չնշված այլ միջոցներ		100%

13. Բանկին անհրաժեշտ կայուն միջոցների ժամկետների հաշվարկը սկսվում է հաշվետու ժամանակահատվածի առաջին օրվան հաջորդող օրվանից:

14. Բանկին անհրաժեշտ կայուն միջոցների հաշվարկման ժամանակ հիմք են ընդունվում բանկին անհրաժեշտ կայուն միջոցների համախառն հաշվեկշռային արժեքները:

15. Սույն հավելվածի 12-րդ կետի Աղյուսակ 2-ով սահմանված «նոստրո» թղթակցային հաշվի, ցպահանջ և անժամկետ ավանդի մեծությունը նվազեցվում է (համապատասխան արժույթով) նույն բանկի նկատմամբ ունեցած «լորո» թղթակցային հաշիվների, ցպահանջ և անժամկետ ավանդային պարտավորությունների չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան «նոստրո» թղթակցային հաշվի, ցպահանջ և անժամկետ ավանդի մնացորդն է:

16. Այն դեպքում, երբ սույն հավելվածի 12-րդ կետի Աղյուսակ 2-ով սահմանված ակտիվների գծով պայմանագրով մասնակի մարումներ են նախատեսված, ապա տվյալ մասի նկատմամբ կիրառվում են սույն հավելվածի 12-րդ կետի Աղյուսակ 2-ի այն համապատասխան կետի պահանջները, որի ժամկետայնությանը համապատասխանում է տվյալ գումարը:

17. Սույն հավելվածի 12-րդ կետի Աղյուսակ 2-ի 29-րդ կետով սահմանված ածանցյալ գործիքների գծով զուտ պարտավորությունը որոշվում է որպես պասիվներում արտացոլված ածանցյալ գործիքների հաշվեկշռային արժեքի և այդ ածանցյալ գործիքների գծով բանկի կողմից դեպոնացված (սառեցված) մարժայի (initial or maintenance margin) տարբերություն:»:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԱՊՐԻԼ 2020)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 51
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 55
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 60
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 61
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 71
Տոկոսադրույքներ
Բանկային փոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 90
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 100
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 102
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 111
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2020 թ. մարտ	2020 թ. մարտի իրական աճի փոփոխությունը 2019 թ. մարտի նկատմամբ (%)	2020 թ. ապրիլ	2020 թ. ապրիլի իրական աճի փոփոխությունը 2019 թ. ապրիլի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		-4.4[1]		-17.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	150829.2	-1.9	134813.1	-8.6
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	16948.2	-26.2	10114.9	-51.0
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	221966.1	-9.9	158557.0	-33.1
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	148421.2[1]	-3.4[1]	131779.7	-15.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	622.0	-1.0	587.4	-3.3
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	238818[1]	9.8[2]	237395[3]	6.4[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2020 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Գների փոփոխությունը շինարարությունում	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.4	0.2	0.3	1.7
Փետրվար	-0.2	-0.9	2.6	-3.2
Մարտ	0.5	-0.4	-1.7	-1.0
Ապրիլ	0.9	-1.2	0.7	-0.4
2020 թ. հունվար - ապրիլը 2019 թ. հունվար - ապրիլի նկատմամբ	0.1	0.1	2.0	-6.6

ԳՆԱՃ

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.8	1.8	1.4
Փետրվար	-0.5	0.6	-0.2
Մարտ	0.1	0.1	0.5
Ապրիլ	-0.3	-0.1	0.9
Մայիս	-1.0	-0.4	
Հունիս	-1.6	-1.9	
Հուլիս	-1.2	-1.9	
Օգոստոս	0.6	-0.4	
Սեպտեմբեր	0.3	0.2	
Հոկտեմբեր	0.1	0.6	
Նոյեմբեր	1.0	1.1	
Դեկտեմբեր	1.5	1.3	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.9	0.8	0.3
Փետրվար	3.3	1.9	-0.5
Մարտ	3.7	1.9	-0.1
Ապրիլ	2.4	2.2	0.9
Մայիս	1.6	2.8	
Հունիս	0.9	2.5	
Հուլիս	2.3	1.7	
Օգոստոս	3.3	0.6	
Սեպտեմբեր	3.5	0.5	
Հոկտեմբեր	2.8	0.9	
Նոյեմբեր	1.8	1.0	
Դեկտեմբեր	1.8	0.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ [5]

Անվանում	*2020 թ. ապրիլը 2019 թ. ապրիլի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (փոկոսային կետ)*
Գնաճ	**0.9**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	-0.3	-0.11
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	11.3	0.47
Հագուստ և կոշիկ	3.8	0.14
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.1	0.18
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	-0.1	0.00
Առողջապահություն	1.8	0.17
Տրանսպորտ	-0.9	-0.07
Կապ	-0.1	0.00
Հանգիստ և մշակույթ	-1.6	-0.04
Կրթություն	3.6	0.11
Ռեստորաններ և հյուրանոցներ	0.9	0.01
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	3.3	0.15

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	-0.2	0.0
Փետրվար	0.3	0.1	0.1
Մարտ	0.2	0.1	0.0
Ապրիլ	0.2	0.0	0.5
Մայիս	-0.1	-0.1	
Հունիս	-0.1	0.0	
Հուլիս	-0.2	-0.2	
Օգոստոս	0.2	0.1	
Սեպտեմբեր	0.3	0.2	
Հոկտեմբեր	0.5	0.1	
Նոյեմբեր	0.2	0.1	
Դեկտեմբեր	0.0	0.1	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.8	1.2	0.4
Փետրվար	4.1	1.0	0.4
Մարտ	4.0	0.9	0.3
Ապրիլ	3.8	0.7	0.8
Մայիս	3.4	0.7	
Հունիս	3.2	0.8	
Հուլիս	3.0	0.8	
Օգոստոս	2.7	0.7	
Սեպտեմբեր	2.6	0.6	
Հոկտեմբեր	2.5	0.2	
Նոյեմբեր	1.9	0.1	
Դեկտեմբեր	3.4	1.8	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2020 թ. ապրիլը 2019 թ. ապրիլի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**0.8**	
Գազ՝ փոխադրամիջոցների լիցքավորման համար	5.4	0.24
Հնդկացորեն	22.9	0.05
Հաց ցորենի, բարձր տեսակի	1.3	0.05
Սուրճ աղացած	10.1	0.05
Վիրահատական ծառայություններ	2.3	0.04
Պանիր կովի կաթից	3.4	0.03
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	1.9	0.03
Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար	-4.2	-0.04
Հավի բուդ՝ թարմ, պաղեցրած	-7.1	-0.05
Շաքարավազ	-9.0	-0.05
«Սննդակարգային» մարգարին	-31.2	-0.06
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած	-8.4	-0.06
Բուսական յուղ արևածաղկի	-8.3	-0.07
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	-3.7	-0.14
Հավի միս՝ (ամբողջական հավ) թարմ, պաղեցրած	-15.3	-0.15

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2020 թ. հունվար - մարտ (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվար - մարտը 2019 թ. հունվար - մարտի նկատմամբ (%)	2020 թ. հունվար - ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվար - ապրիլը 2019 թ. հունվար - ապրիլի նկատմամբ (%)
Արտահանում (ՖՕԲ)	544.9	100.2	692.5	91.9
Ներմուծում (ՍԻՖ)	1020.2	93.8	1323.4	88.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	475.3	87.5	630.9	84.9

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2019 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	77085	33968	43117	272722	153699	119023
ԱՄՆ	24354	21936	2418	81780	74564	7217
Ուկրաինա	858	1147	-289	3078	4376	-1298
Ղազախստան	2163	414	1749	8297	1450	6847
Գերմանիա	3125	2249	875	12246	9671	2575
Իսպանիա	1006	2376	-1370	3577	5271	-1694
Ֆրանսիա	3156	1438	1718	10178	5101	5077
ԱՄԷ	1766	1472	294	6432	5581	851
Չինաստան	244	5147	-4904	1399	16574	-15174
Թուրքիա	159	937	-778	684	2997	-2313
Այլ երկրներ	30406	39228	-8823	135394	117651	17743
Ընդամենը	**144322**	**110314**	**34008**	**535787**	**396935**	**138853**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2020 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	34509	20521	13989	198878	107175	91703
ԱՄՆ	18916	11505	7412	81892	46080	35812
Ուկրաինա	727	1303	-576	3885	4402	-517
Ղազախստան	710	150	560	5828	1136	4692
Գերմանիա	3014	1164	1850	14166	39817	-25651
Իսպանիա	568	611	-43	2992	4046	-1055
Ֆրանսիա	1887	570	1317	9666	4052	5615
ԱՄԷ	2937	548	2389	10466	3921	6545
Չինաստան	249	2490	-2241	887	9474	-8587
Թուրքիա	82	400	-318	609	2416	-1807
Այլ երկրներ	27000	25804	1197	114894	108732	6162
Ընդամենը	**90600**	**65066**	**25534**	**444163**	**331250**	**112913**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2019 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	37323	16473	20850	132678	74792	57886
ԱՄՆ	11795	10615	1180	39782	36252	3530
Ուկրաինա	415	556	-140	1498	2130	-632
Ղազախստան	1048	201	847	4036	706	3331
Գերմանիա	1513	1089	424	5959	4707	1252
Իսպանիա	487	1153	-666	1740	2565	-825
Ֆրանսիա	1529	696	834	4950	2482	2468
ԱՄԷ	854	712	142	3126	2714	412
Չինաստան	118	2492	-2374	682	8056	-7375
Թուրքիա	77	455	-378	333	1459	-1126
Այլ երկրներ	14728	18968	-4240	65863	57198	8664
Ընդամենը	**69887**	**53408**	**16479**	**260647**	**193061**	**67586**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2020 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	16808	9990	6818	95954	51817	44136
ԱՄՆ	9223	5635	3588	39604	22353	17251
Ուկրաինա	354	635	-281	1876	2128	-252
Ղազախստան	347	74	273	2809	550	2259
Գերմանիա	1473	565	908	6854	19087	-12233
Իսպանիա	277	297	-20	1444	1956	-513
Ֆրանսիա	919	278	642	4662	1955	2706
ԱՄԷ	1427	265	1162	5064	1889	3175
Չինաստան	122	1213	-1091	429	4584	-4154
Թուրքիա	40	196	-156	294	1168	-874
Այլ երկրներ	13240	12557	683	55595	52577	3018
Ընդամենը	**44229**	**31704**	**12525**	**214583**	**160064**	**54519**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

